# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/25 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **18 նոյեմբերի 2025թ.**

2025թ. նոյեմբերի 17-ից 18-ը, ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շենքում տեղի ունեցավ հաշվառման քարտի ձեռքբերման ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/25 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Գ. Իգիթյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ, |
| Գ. Ղարիբյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ, |
| Է. Տոնիկյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի փաստաթղթաշրջանառության և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Իգիթյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Վ. Էլոյանը՝ «ՓՐՈՄՈՒՌՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով թիվ 1 Հավելվածով Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. նոյեմբերի 17-ին, ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 23/1 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շենքում ժամը 12:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Հաշվառման քարտ | 50,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Գ. Իգիթյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Ղարիբյան ____________

Է. Տոնիկյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________